

Իրավական ֆիկցիաների դերը իրավահարաբերությունների կարգավորման գործում

1. Ներածություն

«Ֆիկցիա» բառը արդի հայերեն բացատրական բառարաններում բնորոշվում է որպես պատրանք մտացածին՝ անիրական բան¹:

Ըստ լեզվաբանական իմաստի ֆիկցիան այնպիսի մի բան է որն իր ամրագրման պահից զուրկ է իրականությունից²: Օտարերկրյա բառերի բառարանում ֆիկցիան (*լատ. fictio*) բնորոշվում է՝ 1) հորինվածք մտացածին բան հնարովի բան երևակայության արգասիք) եղանակ ըստ որի իրականությունը պայմանավորված է որոշակի պայմանական ֆորմուլայով³:

Հաճախ ֆիկցիան դիտարկվում է կենցաղային մակարդակում որն ընկալվում է որպես ամենապարզ սուտը: Եթե փորձենք հարց տալ թե ի՞նչ է ֆիկցիան ապա ամենայն հավանականությամբ մարդկանց մեծ մասը կասի որ այն սուտն է ոչ իրականը ապատեղեկատվությունը և այլն: Այդուհանդերձ ինչպես կտեսնենք ստորև ֆիկցիան ոչ միայն սուտը չէ այլև ունի մի շարք օգտակար հատկություններ որոնք օգտագործվում են իրավական կարգավորումներում և առհասարակ կյանքի տարբեր ոլորտներում: Այս տեսակետից մենք կվերցնենք իրավունքի ճյուղը:

Սույն հոդվածում կքննարկվի իրավական ֆիկցիաների դերը իրավահարաբերությունների կարգավորման գործում:

Իրավական ֆիկցիաները հիմնականում ուսումնասիրվում և հետազոտվում են իրավունքի կոնկրետ ճյուղերում: Որոշ հեղինակներ ֆիկցիաներին վերաբերվում են թշնաբար համարելով որ դրանք անհրաժեշտ չեն և վնասակար են իրավաբանության համար⁴:

Այլ հեղինակներ ֆիկցիաների օգտագործումը իրավունքի տարբեր ճյուղերում բացառում են քանի որ ըստ նրանց այն ճշմարիտ չէ և այն տեղ չունի ճշմարիտ իրավաբանական գիտության մեջ: Հիմնական մոտեցումն այն է որ ֆիկցիան անիրականը դարձնում է իրական և հակառակը ուստի այն ամենաստվորական սուտն է⁵:

Անշուշտ դա այդպես չէ քանի որ ֆիկցիան և սուտը անհամատեղելի հասկացություններ են: Ֆիկցիայի մասին կարելի է խոսել միայն այն դեպքում երբ ճշմարտությունից շեղումը թույլատրվում է բոլորի կողմից և որևէ մեկը դրա հետ կապված չի խաբվում և այն կոչված է հնարավորինս արդյունավետ կարգավորելու կոնկրետ իրավահարաբերության մասնակիցներ շահերը և հանրության շահը լայն իմաստով:

¹ Տե՛ս Է.Դ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» «Հայաստան» իրատարակչություն Երևան 1976 էջ 1605:

² Տե՛ս Օ.Վ. Կանովա Теория юридических фикций монография изд-во Проспект Москва 016 ст. 6.

³ Современный словарь иностранных слов: ок. 0000. Москва 1999. С. 647.

⁴ Дормидонтов Г. Ф. Классификация явлений юридического быта относимых к случаям применения фикций— Казань: Типо-литография Имп. ун-та 1985. ст. 30.

⁵ Дормидонтов Г. Ф. Классификация явлений юридического быта относимых к случаям применения фикций. — Казань: Типо-литография Имп. ун-та 1985. Ст. 137.

Օրինակ Օ. Ա. Բարշովան նկատում է որ իրավական ֆիկցիան իրավունքի նորմ է որը կոչված է կարգավորելու օբյեկտիվ իրականությունը⁶:

Լ. Ա. Դուշակովան նշում է որ իրավական ֆիկցիան համապատասխան իրավական աղբյուրներում ամրագրված և իրավաբանական պրակտիկայի կողմից օգտագործվող հատուկ բնույթի իրավական նորմ է որի միջոցով իրականությանը չհամապատասխանող կամ դրան հակասող իրավիճակը նորմատիվորեն հռչակվում է գոյություն և իրավաբանական նշանակություն ունեցող որի նպատակը հասարակական հարաբերություններում անհստակությունների հաղթահարումն է⁷:

Յու. Գ. Զույեվը իր հերթին նշում է որ իրավական ֆիկցիաները իրենցից ներկայացնում են յուրահատուկ իրավունքի նորմեր⁸:

Ֆիկցիաների անհրաժեշտության և օգտակարության մասին խոսել են նաև այլ հեղինակներ⁹:

Իրավական ֆիկցիաներն անկասկած դրական դեր են խաղում նորմաստեղծ և իրավակիրառ պրակտիկայում: Նրանք ապահովում են հասարակական շահի պահպանությունը և նպաստում են տնտեսական շրջանառության դատավարական իրավահարաբերությունների և իրավունքի այլ ճյուղերի արդյունավետ կարգավորումներին:

2. Իրավական ֆիկցիայի հասկացությունը

Շատ հետազոտողներ իրավական ֆիկցիան համարում են հատուկ բնույթի իրավական փաստ¹⁰ փաստի ենթադրություն որը չի համապատասխանում իրականությանը¹¹: Որոշներն իրավական ֆիկցիան դիտարկում են որպես իրավական հատուկ նորմ ըստ որի ֆիկցիան ամրագրվում է համապատասխան իրավական նորմերում և օգտագործվում է իրավակիրառ պրակտիկայի կողմից¹²: Այսուհանդերձ ի՞նչ է իրավական ֆիկցիան:

Իրավական ֆիկցիայի էությունն պարզելու համար նախ անհրաժեշտ է բացահայտել իրավական ֆիկցիայի հատկանիշները:

1. Իրավական ֆիկցիայի բացահայտման հիմքում նախ և առաջ պետք է դնել՝ «ենթադրություն» բառը: Ընդ որում այստեղ հարկ է ընդգծել որ ենթադրություն բառը որևէ կապ չունի իրավական կանխավարկածի հետ: Այսինքն իրավական ֆիկցիան իրականությանը չհամապատասխանող փաստի վերաբերյալ ենթադրություն է: Իրավական ֆիկցիայի հիմնական հատկանիշը իրականությանը չհամապատասխանելն է որն ընդգծում է դրա ունիկալ բնույթը: Օրենսդիրն իր նորմաստեղծ գործունեության ընթացքում մասնավորապես տարբեր տեսակի իրավական ակտեր ընդունելիս իրավական ֆիկցիան ներառելով դրանց մեջ

⁶ Баршова О. А. Понятие и виды юридических фикций //

<http://www.conf.msu.ru/archive/Lomonosov011/1371/31579>. Дата обращения: 3 декабря 013 г.

⁷ Душакова Л. А. Правовые фикции: дис. ... канд. юрид. наук. Волгоград 004. Ст. 8.

⁸ Зуев Ю. Г. Презумпции в уголовном праве: дис. ... канд. юрид. наук. Ярославль 000. Ст. 86.

⁹ Волков А. В. Принцип недопустимости злоупотребления гражданским правом в законодательстве и судебной практике. Москва 011. Ст. 503. Зайцев И. Правовые фикции в гражданском процессе // Российская юстиция. 1997 N 1. Ст. 35 36; Кузнецова О. А. Специализированные нормы российского гражданского права: теоретические проблемы. Екатеринбург 007. Ст. 3.

¹⁰ Панько К.К. Фикции в уголовном праве и правоприменении – Воронеж: Истоки 010. Ст. 453.

¹¹ Зацепина О.Е. К вопросу о сущности правовой фикции // Пролог: журнал о праве. 017. N . Ст. 5

¹² Душакова Л.А. Правовые фикции: дис. ... канд. Юрид. Наук.. – Ростов н/Д. 014. Ст. 1.

գիտակցաբար փոփոխում է իրականությունը ոչ իրական իրավիճակը ներառելով իրավական նորմում որի արդյունքում այն ձեռք է բերում իրականության բնույթ քանի որ իրավական նորմերն ունեն համապարտադիր և իշխանական բնույթ:

2. Իրավական ֆիկցիան նորմատիվ բնույթի մտահանգում է որով իրականում գոյություն չունեցող իրավիճակը ճանաչվում է գոյություն ունեցող (կամ հակառակը)¹³: Իրավական ֆիկցիան իրականությանն առավելապես չհամապատասխանող մտահանգում է: Իրավական ֆիկցիային ներհատուկ է գոյություն չունեցող երևույթը գիտակցաբար ճանաչել գոյություն ունեցող կամ գոյություն ունեցող երևույթը գիտակցաբար ճանաչել գոյություն չունեցող¹⁴: Օրինակ երբ անձը օրենքով սահմանված կարգով դիմում է ներկայացրել վարչական մարմնին որևէ իրավունք տրամադրելու խնդրանքով և վարչական մարմինը այդ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթով օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացրել ապա վարչական ակտը համարվում է ընդունված և անձը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդված): Մեկ այլ օրինակ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի համաձայն՝ դատավարության մասնակիցը պարտավոր է դատարանին հայտնել գործի քննության ընթացքում իր հասցեի էլեկտրոնային փոստի կամ էլեկտրոնային հաղորդակցության այլ միջոցի փոփոխության մասին: Նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցագիրն ուղարկվում է այն հասցեով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցով որով դատավարության մասնակիցը վերջին անգամ ծանուցվել է և համարվում է հանձնված թեկուզև հասցեատերն այն փաստացի չի ստացել: Վկայակոչված օրինակներում ակնհայտ է որ առաջին դեպքում վարչական մարմինը թեև չի ընդունել վարչական ակտ սակայն օրենսդիրը գիտակցաբար ճանաչում է որ այն ընդունվել է և անձին պատգամել է դրսևորել այնպիսի վարքագիծ ինչպիսին կդրսևորեր երբ վարչական ակտն ընդունված լիներ հոգուտ իրեն: Երկրորդ օրինակում ևս ակնհայտ է որ թեև դատավարության մասնակիցը (հասցեատերը) փաստացի չի ստացել ծանուցագիրը սակայն օրենսդիրը գիտակցաբար ճանաչել է այն ստացված:

3. Իրավաբանական ֆիկցիան նորմատիվ բնույթի մտահանգում է քանի որ այն կազմում է իրավական նորմի բովանդակությունը: Գրականության մեջ առավել տարածված է այն մոտեցումը որ իրավական ֆիկցիան իրավաբանական տեխնիկայի միջոց է սակայն ինչպես իրավական կանխավարկածը իրավական ֆիկցիան նույնպես կարող է հանդես գալ որպես իրավաբանական տեխնիկայի միջոց միայն իրավաստեղծ գործունեության ընթացքում իսկ իրավական կարգավորման հիմնական փուլերում հանդես է գալիս որպես իրավական նորմ քանի որ այն ամրագրվում է իրավունքի կոնկրետ աղբյուրում:

4. Իրավաբանական ֆիկցիաները խիստ նպատակային դրույթներ են քանի որ օրենսդիրն իրավական ֆիկցիայի է դիմում ծայրահեղ դեպքերում երբ իրավական խնդիրը կարող է լուծվել միայն իրավական ֆիկցիա նախատեսելով: Վերը բերված

¹³ Պետության և իրավունքի տեսություն: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան Մ. Մուրադյան «Լուսաբաց հրատարակչություն» 3-րդ լրամշակված հրատ. Երևան 018 էջ 38:

¹⁴ Տե՛ս նույն տեղը:

օրինակներում վարչարարության արագ և արդյունավետ իրականացումը հնարավոր է միայն այն դեպքում երբ վարչական մարմինը կգործի կանխատեսելի և ողջամիտ ժամկետում դրանով իսկ կատարելով իր պոզիտիվ պարտականությունը անձի հանդեպ: Այս նպատակին հասնելու համար օրենսդիրը որպես վարչարարության ընդհանուր ժամկետ սահմանել է առավելագույնը երեսուն օր և եթե այդ ժամկետում վարչական մարմինը դրսևորում է անգործություն ապա անձի իրավունքը համարվում է իրացված: Հաջորդ օրինակում արդարադատության արդյունավետությունն ապահովելու նպատակով օրենսդիրը համարում է դատական ծանուցագիրը հանձնված թեկուզև հասցեատերն այն փաստացի չի ստացել:

5. Իրավական ֆիկցիաներն անհերքելի մտահանգումներ են: Բանն այն է որ օրենսդիրը իրականությանը չհամապատասխանող մտահանգմանը գիտակցաբար տվել է իրավական ուժ: Ուստի եթե դրան զուգահեռ նախատեսվի նաև իրավական ֆիկցիան հերքելու հնարավորություն ապա կարծեգրկվի իրավական ֆիկցիայի նշանակությունը և հնարավոր չէր լինի լուծելու իրավական որոշակիության կամ սոցիալական արժեքների հատուկ պաշտպանության խնդիրը¹⁵:

3. Իրավական ֆիկցիան որպես իրավահարաբերությունների կարգավորման գործուն և ճկուն մեխանիզմ

Ինչպես պնդում է ռուս իրավագետ Կաշանինան օրենսդիրը իրավական ֆիկցիաները ներդնում է օրենսդրության մեջ ոչ լավ կյանքից: Իրավական կարգավորումների այլ տարբերակները համարվում են առավել ծախսատար (ժամանակի կամ նյութական առումներով) և այդ պատճառով ոչ էֆֆեկտիվ են¹⁶:

Ֆիկցիաները դրանք յուրահատուկ փրկության օղակներ են որոնք օրենսդիրը տալիս է իրավունքի սուբյեկտներին որպեսզի լուծվեն կոնկրետ իրավական իրավիճակներ¹⁷:

Իրավահարաբերությունների կարգավորման ընթացքում բազմաթիվ են դեպքերը երբ իրավական անվտանգությունից ելնելով օրենսդիրը այս կամ այն փաստի գոյությունը կամ բացակայությունը պետք է ճանաչի որպեսզի հնարավոր լինի անձանց իրավունքների արդյունավետ իրացումը: Բացասել իրավական ֆիկցիաները կարող է բերել նրան որ ընդհուպ կարող է կանգ առնել կոնկրետ իրավահարաբերության շրջանառությունը: Օրինակ որպեսզի ծագեն ժառանգական իրավահարաբերություններ ապա պարտադիր պետք է լինի անձի մահը: Այլ կերպ ասած քանի դեռ անձը չի մահացել ապա նրան պատկանող գույքը և այլ արժեքները չեն կարող համապարփակ իրավահաջորդությամբ անցել այլ անձանց: Իսկ ի՞նչ անել երբ մենք չգիտենք անձը մահացել է թե՞ ոչ: Զորօրինակ անձի վերաբերյալ տևական ժամանակ առկա չէ որևէ տեղեկություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ Օրենսգրք) 1184-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է որ անձի գույքը (ժառանգությունը) անփոփոխ վիճակում որպես միասնական ամբողջություն անցնում է այլ անձանց (համապարփակ իրավահաջորդություն) միայն այդ անձի մահվան դեպքում: Օրենսգրքի 1187-րդ հոդվածի -րդ մասը սահմանում է որ

¹⁵ Տե՛ս նույն տեղը էջ 38:

¹⁶ Кашанина Т.В. Юридическая техника.— .: НОРМА: ИНФРА-М 011. Ст. 00-01.

¹⁷ Зайцев И. Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция. —1997. N1. Ст. 35-36.

դատարանով քաղաքացուն մահացած ճանաչելն առաջացնում է նույն իրավական հետևանքները ինչը՝ քաղաքացու մահը:

Ակնհայտ է որ այս դեպքում օրենսդիրը դիմել է իրավական ֆիկցիայի օգնությանը՝ ելնելով այն բանից որ չկանգնի կամ չխոչընդոտվի քաղաքացիա-իրավական հարաբերությունների շրջանառությունը մասնավորապես որ անձի գույքը համապարփակ իրավահաջորդությամբ անցնի այլ անձանց և այլն: Նման կարգավորում չտալն անխուսափելիորեն կարող էր առաջացնել ծանր հետևանքներ ինչպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտներին այնպես էլ հանրությանը՝ լայն իմաստով: Հայտնի է որ անգամ սեփականության իրավունքից հրաժարվելու դեպքում սեփականատիրոջ իրավունքներն ու պարտականությունները չեն դադարում քանի դեռ այլ անձինք ձեռք չեն բերել այդ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը (Օրենսգրքի 80-րդ հոդվածի -րդ մաս): Այսինքն գույքի նկատմամբ ունեցած սեփականության իրավունքը ոչ միայն իրավունք է այլև պարտականություն և այդ պարտականությունը կատարելով է որ քաղաքացիա-իրավական սուբյեկտների և հանրության շահերին վնաս չի պատճառվում (բազմաբնակարան շենքում բնակարանի նկատմամբ հօգ տանելը առավել վտանգի աղբյուրը կառավարելը և այլն):

Եզրակացություն: Այսպիսով առանց իրավական ֆիկցիաների իրավական կարգավորումները ոչ միայն կոժվարանան այլև մի շարք դեպքերում դրանք ուղղակի գոյություն չեն ունենա ինչն էլ իր հերթին կարող է բերել իրավունքի սուբյեկտների շահերի ոտնահարման ինչպես նաև իրավական անվտանգության խաթարմանը: հասարակական հարաբերություններն օր-օրի զարգանում են ներառելով տարբեր ոլորտներ և դրական դինամիկայի կողքին առաջանում են տարբեր տեսակի իրավական խնդիրներ որոնք անհնար է լուծել առանց իրավական ֆիկցիաների: Այսինքն օրենսդիրը ոչ բոլոր դեպքերում է կարող պարզել օբյեկտիվ իրականությունը և դրա հիման վրա կազմակերպել իր իրավաստեղծ գործունեությունը: Ճշմարտության (որը հիմքն է արդարության) պարզումից հետո է որ օրենսդիրը կարգավորումներ է տալիս հասարակական հարաբերություններին: Այս տեսակետից վերացական ճշմարտությունը որն ընդունելի է բոլորի համար հենց այն գործիքն է որի միջոցով ապահովվում է հասարակական հարաբերությունների անխափան շրջանառությունը:

4. Օգտագործված գրականության ցանկ

- Ա. Ղամբարյան Մ. Մուրադյան. Պետության և իրավունքի տեսություն – 3-րդ լրամշակված հրատ. «Լուսաբաց հրատարակչություն» Երևան 018:
- Է.Դ. Աղայան «Արդի հայերենի բացատրական բառարան» «Հայաստան» հրատարակչություն Երևան 1976:
- Օ.Վ. Танимов Теория юридических фикций монография изд-во Проспект Москва 016:
- Дормидонтов Г. Ф. Классификация явлений юридического быта относимых к случаям применения фикций/ Г.Ф. Дормидонтов. – Казань: Типо-литография Имп. ун-та 1985:
- Панько К.К. Фикции в уголовном праве и правоприменении / К.К. Панько. – Воронеж: Истоки 010:
- Зацепина О.Е. К вопросу о сущности правовой фикции / О.Е. Зацепина // Пролог: журнал о праве. 017. N .
- Душакова Л.А. Правовые фикции: дис. ... канд. юрид. Наук / Л.А. Душакова. – Ростов н/Д. 014.
- Каминская В.И. Учение о правовых презумпциях в уголовном процессе / В.И. Каминская. – Москва Изд-во Акад. Наук СССР 1948.
- Кашанина Т.В. Юридическая техника / Т.В. Кашанина. – Москва.: НОРМА: ИНФРА-М 011.
- Зайцев И. Правовая фикция в гражданском процессе // Российская юстиция. – 1997. – N1.
- Баршова О. А. Понятие и виды юридических фикций.
- Зуев Ю. Г. Презумпции в уголовном праве: дис. ... канд. юрид. наук. Ярославль 000.